ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ

т. XXX. № 9. 1977

ԱՇՈՏ ՏԻԳՐԱՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

1977 թվի օգոստոսի 28-ին հանկարծամահ եղավ՝ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կենդանաբանության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ գիտական գծով, ակարալոգիայի լաբորատորիայի վարիչ, գիտության այդ մասնաճյուղի հիմնադիրներից մեկը Հայաստանում, կենսաբանական գիտությունների թեկնածու Աշոտ Տիգրանի Բաղդասարյանը։

Ա. Տ. Բաղդասարյանը ծնվել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ճարտար գյուղում, 1919 թ., գյուղացու ընտանիքում։ Նա սկզբնական կրթությունը ստացել է գյուղի ոչ լրիվ միջնակարգ դպրոցում, ապա ընդունվել և սովորել է Շուշիի մանկավարժական բանֆակում, որը և հաջողությամբ ավարտել է 1937 թ.։ 1938 թվականին Ա. Տ. Բաղդասարյանն ընդունվել է Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը։ Հայրենական մեծ պատերազմի ահեղ օրերին՝ 1941-ին, շատ ուսանողների հետ միասին Աշոտ Բաղդասարյանը նույնպես մեկնում է հայրենիքը պաշտպանելու, 1944 թվականին զորացրվում է, ապա վերադառնում Երևանի պետական համալսարան ուսումը շարունակելու։ 1946 թվին հաջողությամբ ավարտելով կենսաբանական ֆակուլտետը, նույն թվին աշխատանքի է անցնում Հայկական ՍՍՀ ԳԱ-ի կենդանաբանական ինստիտուտ, նախ որպես լաբորանտ, հետո կրտսեր գիտաշխատող։ Մեկ տարի զբաղվում է ջրային անողնաշարավոր կենդանիների ֆաունայի ուսումնասիրությամբ, ապա հիմնական ուղղություն է ընտրում տզաբանությունը։ Այստեղից էլ սկսվում են նրա գլխավոր հետազոտությունները։ Նա հիմնականում ուսումնասիրում է գյուղատնտեսական կուլտուրաների և անտառային բույսերի բուսակեր տզերը, դրանց էկոլոգիան, մշակում պայքարի միջոցներ գյուղատնտեսական կուլտուրաների լուրջ վնասատուների դեմ։ Նրա նախնական հետազոտությունները վերաբերում են Հայաստանի տետրանիխոյիդ տզերին, որը և որպես դիսերտացիա հաջողությամբ պաշտպանեց 1952 թվին և որը, իբրև Հայաստանի ֆաունայի հատորներից մեկը, լույս տեսավ 1956 թվին։ 1958 թվին նրան տրվում է ավագ գիտական աշխատողի կոչում։ Այնուհետև Ա. Տ. Բաղդասարյանը շարունակում է զբաղվել տզերի մյուս ընտանիքներով, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում գիտության համար։ Նրա ուսումնասիրություններն ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն։ Նա հավաքեց արժեքավոր շատ նյութեր, որոնց մի մասը մնաց դեռևս անմշակ։ Այդ թվում նկարագրեց գիտության համար նոր տեսակներ։ Ա. Բաղդասարյանը հրապարակել է շուրջ 34 աշխատություններ, որոնք ճանաչում են բերել նրան ոչ միայն մեր հայրենիքում, այլև նրա սահմաններից դուրս։ Նա իր կյանքի ու գործունեության ընթացքում իր գիտելիքները անմնացորդ տվեց իր ժողովրդին։ Ա. Բաղդասարյանը պատրաստել է կադրեր, որոնք ներկայումս աշխատում են նրա լաբորատորիայում, շարունակելով նրա գործը։

Ա. Տ. Բաղդասարյանը ՍՄԿԿ անդամ է 1947 թվից, երկար տարիներ եղել է ինստիտուտի կուսակցական կազմակերպության քարտուղար, հանդիսանալով լավ կազմակերպիչ ու սկզբունքային կոմունիստ։ Նա ազնիվ ու բյուրեղային մարդ էր, օժտված լավագույն հատկություններով, լավ գիտնական ու ընկեր և միշտ վայելում էր կոլեկտիվի սերն ու հարգանքը։

Ա. Տ. Բաղդասարյանն իր կյանքի գիտական գործունեությունն ամբողջությամբ անց է կացրել ինստիտուտում։ Նրա հիշատակը միշտ վառ կմնա նրա ընկերների, բարեկամների ու կոլեգաների սրտերում։

Գ. Դ. ԱՎԱԳՅԱՆ